Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/12>> ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19.09.2019թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝	Դ. Շատվերյան
	Ռ. Եղիազարյան
	Աշ. Գրիգորյան
	Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 27.08.2019թ.

ա) հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Աքարա>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 539 (հինգ հարյուր երեսունինը) ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որը չի գերազանցում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում (29.08.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Մասնակցի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չեն հրավերով պահանջվող Հավելված N3-ը և Հավելված N3.2-ը:

- Մասնակցի կողմից ներկայացված պայմանագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և չեն համարվում նմանատիպ: Պայմանագրերին կից չեն ներկայացվել նախագծանախահաշվային փաստաթղթերի դրական փորձաքննության վերաբերյալ հավաստող փաստաթղթեր:

- ՀՀ ՊՆ-ի հետ 20.10.2017թ. կնքված N ՓՆՄԱՇՁԲ-10/11-2 պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N3 և N3.1 Հավելվածները բացակայում են:

- ՀՀ քաղաքապետարանի հետ 13.09.2017թ. կնքված <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/18-1>> պայմանգրում բացակայում են պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող բոլոր Հավելվածները:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 13.09.2019թ. ծանուցվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում (14.09.2019թ. դրությամբ) արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Աքարա>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Աշ. Գրիգորյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան